10 օր

# Լուրեր սահմանից

Անցած շաբաթվա սկիզբը Հայաստանի սահմանամերձ գոտիներում նշանավորվեց Նախիջևանի զինված կազմավորումների կողմից ձեռնարկվող ոտնձգությունների նոր ակտիվացմամբ: Հրետակոծությունների թիրախ էր դարձել հատկապես Եղեգնաձորի շրջանը: Մայիսի 10–ի լուսաբացին Խաչիկ և Արենի գյուղերի պաշտպանական գծում սկսված տեղական բնույթի կրակոցները կեսօրին վերաճեցին ուժգին փոխհրետակոծության: Հակառակորդը Արենի գյուղի ուղղությամբ գործում էր «Գրադ» կայանքներ և հրանոթներ: Երեկոյան հայկական ուժերը համարժեք գործողություններով հարկադրեցին թշնամուն դադարեցնել կրակը: Տուժածներ չկան: Արենիում կան ավերածություններ: Նույն օրը ցերեկը լարված էր իրավիճակը նաև Արարատի սահմաններում: Կրկին Նախիջևանի տարածքից տանկերից և հետևակի մարտական մեքենայից կրակ էր բացվել Սնակավան գյուղի պաշտպանական դիրքերի վրա: Հաջորդ օրը ցերեկը թշնամին վերսկսեց կրակոցները Եղեգնաձորի սահմանների մոտ: Ամաղու գյուղի դիրքերի ուղղությամբ ադրբեջանցիները գործածում էին հետևակի մարտական մեքենայի կրակային հզորությունը: Տարբեր զինատեսակներից ընդհատումներով գնդակոծվում էին նաև Սիսիանի Շաղաթ գյուղի և Արարատի շրջանի սահմանային պահակակետերը:

Հայ սահմանագորայինները պատասխան միջոցներ են ձեռնարկել: Մեր կողմից տուժածներ չկան: Մայիսի 12-ին Նախիջևանի կազմավորումները Եղեգնաձորի Ամաղու գյուղի սահմանից 5կմ արևմուտք տեղաշարժեցին մեկ տանկ և «Գրադ» կայանք: Այնուամենայնիվ ոտնձգություններ չձեռնարկվեցին: Նույն օրը երեկոյան Ղազախի Օղունդաղ ռազմական բազայից հրանոթային 2 արկ է արձակվել Իջևանի Բերքաբեր գյուղի վրա, որի հետևանքով մեկ կին բնակիչ վիրավորվել է, մեկ ավտոմեքենա այրվել: Հայկական ուժերը պատասխան գործողությունների են դիմել: Մայիսի 13-ից մինչև 15-ը Հայաստանի սահմաններում հարաբերական հանգիստ էր: Վերջին երկու օրերի ընթացքում փոխհրաձգություններ են տեղի ունեցել Նոյեմբերյանի Դովեղ և Ճավարշավան գյուղերի սահմաններում: Հակառակորդը գործածել է հիմնականում հրաձգային զենքեր: Մեր կողմից տուժածներ չկան: Սահմանամերձ մյուս հատվածներում միջադեպեր չեն արձանագրվել:

Գագիկ Մարտոյան